ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից 2008թ. կազմակերպվող գիտական միջոցառումների ցանկ

- ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտը ԵՊՀ-ի հետ համատեղ 2008թ. սեպտեմբերի 19-ից 26-ը Ծաղկաձորի ԵՊՀ հանգստյան տանը կազմակերպում է միջազգային գիտաժողով "Հարմոնիկ անալիզ և մոտարկումներ, IV" թեմայով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալեքսանդր Թալալյանի ծննդյան 80-ամյակին: Գրանցման վերջնաժամկետն է 2008թ. ապրիլի 30-ը: Մանրամասների համար այցելել գիտաժողովի կայքը http://math.sci.am/conference/sept2008/conf.html

- CIMPA-ն (UNESCO) և ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտը, Մաքս Պլանկի միջազգային հետազոտական կենտրոնի մաթեմատիկայի բաժանմունքի (Գերմանիա), ԵՊՀ-ի և Շվեդիայի Թագավորական տեխնոլոգիաների ինստիտուտի հետ համատեղ 2008 թվականի հունիսի 15-ից 24-ը ԵՊՀ Ծաղկաձորի հանգստյան տանը կազմակերպում են ամառային դպրոց "Ոչ գծային անալիզ և մասնակի ածանցյալներով հավասարումների երկրաչափական տեսություն" թեմայով: Գրանցման վերջնաժամկետն է 2008թ. մարտի 31-ը: Մանրամասների համար այցելել ամառային դպրոցի կայքը http://www.imprs-mis.mpg.de/CIMPA/

- 2008 թվականի հոկտեմբերի 14-17 ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների Ինստիտուտը կազմակերպում է ամենամյա հանրապետական գիտաժողով "Լազերային ֆիզիկա-2008" թեմայով: Գիտաժողովի թեմատիկան.

  նյութեր քվանտային էլեկտրոնիկայի համար, նրանց ստացման եղանակները, հատկությունները և կիրառումը
  լազերային ճառագայթման գեներացիա և փոխակերպում
  լազերային ճառագայթման ռեզոնանսային փոխազդեցությունը նյութի հետ
  լազերային սարքաշինություն
  լազերային սպեկտրոսկոպիա
  նյութական ալիքներ
  քվանտային օպտիկա, քվանտային ինֆորմացիա

  Այլ մանրամասներին կարող եք ծանոթանալ http://www.ipr.sci.am/lp/2008

- 2008 թվականի սեպտեմբերի 15-18-ը ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը կազմակերպում է միջազգային գիտաժողով "Տիեզերական օբյեկտների էվոլյուցիան պայմանավորված նրանց ֆիզիկական ակտիվությամբ" թեմայով: Մանրամասներին կարող եք ծանոթանալ

http://www.bao.am

- 2008 թվականի սեպտեմբերի 20-30 ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը կազմակերպում է "Երիտասարդ աստղաֆիզիկոսների երկրորդ միջազգային դպրոց Բյուրականում" ("Գործնական աստղաֆիզիկա"): Մանրամասներին կարող եք ծանոթանալ http://www.bao.am